

ՅՈՒՆԻՔԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԹԻՖ-  
ԼԻՍՈՒՄ

—

Հայ գրի և տպագրութեան յորելեան  
նական տօները Թիֆլիզում անցան  
սառը. ժողովրդական լայն մասսանե-  
րի մէջ չէր նկատուած ոչ մի ոգևորու-  
թիւն, այլ ամեն ինչ կրում էր կամ  
ժիսական կամ պաշտօնական կերպա-  
րանք. ոչ Աշոտ եպիսկոպոսի ու Բե-  
նիկ վարդապետի եկեղեցում արած  
քարոզները և ոչ էլ Մեսրոպ եպիսկո-  
պոսի ջերմ ու զգացւած ճառերը շտա-  
քացրին ժողովրդի սառած սրտերը.  
նոյնը նկատելի էր «Սահակ-Մեսրոպի»  
ներկայացմանը թատրոնում աշա-  
կերտութեան համար և ժողովարանում,  
ուր դասախօսում էին Ն. Աղբալեան, Գ.  
Իփեկեան և Ս. Լիսիցեան:

Ժողովուրդ շատ կար թափօրի յե-  
տեից. մանավանդ Վանքի բաղում,  
սակայն ոչ կեցցէներ և ոչ էլ ոգևո-  
րութեան ժողովրդական այլ ցոյ-  
ցեր տեղի չունեցան: Վանքից Ներ-  
սիսեան Դպրոց գնացող մեծ թափօրը  
սեւիլի նման էր յուղարկաւորութեան թա-  
փօրի, քան ազգային մեծ տօնի. ոչ  
գուռնա կար, ոչ աշուղների նւագածու-  
թիւն:

Պաշտօնական տօնակատարութիւնը  
Ներսիսեան դպրոցում լցրել էր մեծ  
զահլիճը պետական բարձր պաշտօնեա-  
ներով և թէ հայ հասարակութեան  
ընտրեալ հրաւիրեալներով, այն ինչ  
դպրոցի բաղում, ուր հաւաքւած էր  
մեծ բազմութիւն; ժողովուրդը չզի-  
տէր ինչ անել և ժամերով զննում էր  
աւտօմօրիլները և եկող հիւրերին, ոչ  
մի դասախօսութիւն, ոչ մի բացատրա-  
կան զրոյց այնտեղ ժողովրդի համար  
չեղաւ:

Ենորհիւ պ. Ս. Լիսիցեանի շափ ու  
սահմանն անցած երկար ճառի, Ներ-  
սիսեան դպրոցի հանդէսը աւարտեց  
ժամը 5-ից շատ անց: Պաշտօնական  
շնորհաւորութիւններ, սովորական դար-  
ձած դարձւածքներով, եղան մեծ թւով  
թէ օտարներից և թէ հասարակական  
մի շարք հիմնարկութիւնների կողմից:

Եւ այսպէս, էջմիածինն իր գործե-  
լակերպով ազգային ամբողջ տօնակա-  
տարութեան վրայ գրել էր իր սառը,  
պաշտօնական և ժիսական կնիքը: Այս  
բանը շեշտելու է առանձնապէս ի դե-  
կավորութիւն ապագայ տօների և ի  
յիշատակ հայ պատմագրութեան: